

«ԲԱՆՔԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ» ՀԱՆԴԵՍՐ

ՄԱՐԳՈ ՄԵԻԹԱՐՅԱՆ

«Բանքեր գրականության և արվեստի» հանդեսը տպագրվել է Պետերբուրգում, երկու հատորով 1903 և 1904 թվականներին: Այն մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն իբրև մամուլի բացառիկ արժեքավոր օրգան, այլ նաև այն պատճառով, որ խմբագրվել է խոշոր պատմաբան և բանասեր Նիկողայոս Ադոնցի կողմից: Մինչ այդ խմբագրական աշխատանքը, Ադոնցն ավարտել էր Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների և պատմաբանասիրական ֆակուլտետները և 1899–1900 թվականներին բյուզանդագիտության մեջ խորացել Մյունխենի, Փարիզի, Վենետիկի ու Լոնդոնի գիտական և ուսումնական հաստատություններում: Թվում է՝ նեղ մասնագիտության մեջ խորասուզված երիտասարդ գիտնականը չպետք է ժամանակ ունենար զբաղվելու նաև լրագրության հոգսաշատ գործերով: Բայց բյուզանդագետ լինելու հետ մեկտեղ Ադոնցը ճշմարիտ քաղաքացի էր և խորաթափանց հրապարակախոս: Արտասահմանից վերադառնալուց հետո նա միառժամանակ մասնագիտության բերուժով աշխատում է Թիֆլիսում և էջմիածնում, ապա, հաստատվելով Պետերբուրգում, ձեռնարկում գիտական-արվեստագիտական և գրական հանդեսի հրատարակության գործը:

Մինչ «Բանքեր գրականության և արվեստի» հանդեսի երևան դալը, հայ իրականության մեջ տպագրվել էին մի շարք դրական-գեղարվեստական պարբերականներ, բայց «Բանքերը» տարբերվում էր դրանցից իր որոշակի ծրագրով և պատմական ժամանակաշրջանի հարուցած հրատապ հարցերի ինքնատիպ լուծումներով: 1877–1878 թթ. ուս-թուրքական պատերազմին հաջորդել էին Արևմտյան Հայաստանում ծավալված արյունալի կոտորածները, անցել էին Հայկական հարցի քննարկումների բաղմամպիսի թատերախաղեր, սակայն XX դ. սկիզբը ոչինչ չէր խոստանում արևմտահայերին: Սուլթան Աբդուլ Համիդն անվարան և անպատիժ շարունակում էր ջարդի իր քաղաքականությունը, և հայության հոծ խմբերը, լքելով հայրենի հողը, պանդխտության ճանապարհներով անցնում էին Ռուսաստան, Ամերիկա, Եվրոպա...

Նիկողայոս Ադոնցի քաղաքական ծրագրի հիմքում ընկած էր մի հստակ դադափար. հայ ընթերցողին դաստիարակել ինքնակրթության, մտավոր զարգացման ճանապարհով, նրանից պատրաստել ժամանակի քաղաքակրթությանը դիտակ քաղաքացի: Այն, ինչ չէին կարողացել կատարել դիվանագիտությունը, հույսը և հավատը, նրա խորին համոզմունքով պետք է կատարեին գրականությունը և արվեստը: Այլ կերպ ասած, հայ քաղաքացին պետք է իր արժանի տեղը դնեն համայն աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների շարքում և կարողանար լսելի դարձնել իր խոսքը, թերևս նաև պահանջները:

Այդ ցանկալի մակարդակին հասցնելու համար հայ ընթերցողին, Ադոնցը «Բանբերում» զետեղել է ոչ միայն մեծարժեք հրապարակախոսական հոդվածներ և գեղարվեստական գործեր, այլև դիմել է արվեստի ամենագոր ուժի օգնությանը: Նրա հանդեսը նախատեսված էր դառնալու յուրատեսակ մի գալորտ, որի խնդիրն էր նաև մշակել ընթերցողների գեղագիտական ճաշակը, նրանց հաղորդակցել արվեստի աշխարհի հարստությունը:

«Բանբերի» երկու գրքերում տպագրվել են խմբագրի բազմաթիվ հոդվածները, որոնցով Ադոնցը ընթերցողներին էր ներկայանում և՛ իբրև հրապարակախոս, և՛ գրականության տեսաբան, և՛ լեզվաբան, և՛ արվեստաբան, բոլոր այդ բնագավառներում դրսևորելով իր անբասիր գիտելիքներն ու բարձր ճաշակը: Այսպես, եթե մուտքի խոսքում նա ներկայացնում է հանդեսի նպատակը՝ արվեստի վերաբերյալ ընթերցողներին անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելու մասին, գրականասեր ընթերցողներին ծանոթացնում է ժամանակին եվրոպայում ստեղծված գրական նոր ուղղություններին, ապա միանգամայն նոր խոսք է ասում լեզվական հարցերի վիճահարույց խնդիրների ոլորտներում, ինչպես և փայլում է իբրև ազգային հարցի տեսաբան-հրապարակախոս: Այս առումով առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում և առ այսօր պահպանում է իր գիտական անանց նշանակությունը՝ Ադոնցի «Հայոց եկեղեցու 1600-ամյակի նախօրեին» ծրագրային հոդվածը: Այն աչքի է ընկնում ոչ միայն պատմագիտական նյութի խորը վերլուծությամբ, այլև կրոնի որպես ազգութային պատմական քաղաքակրթական ինքնահատկության բացառիկ դերի քննությամբ:

Հաշվի առնելով այն իրավիճակը, որ նոր ժամանակներում կրոնի ազդեցությունը թուլացած է հասարակության մեջ և շատերը նրա գարն անգամ անցած են համարում, Ադոնցը փորձում է վերլուծել այդ երևույթի պատմական պատճառները և հիմնավորել իր այն կարևոր թեզը, թե «ազգութայինները և իրենց դավանած կրոնները այնպիսի սերտություններ են կապված, որ դժվար է միմյանցից զատել, գրեթե ձուլված են միասին և կազմում են մի անքակ միություն, մի գաղափար»¹: Չնայած դրան, նա չի փորձում անտեսել այն իրողությունը, որ, սկսած վերածնության ժամանակներից և մասնավորապես XIX դ., անհատների զարգացումը մեծապես ուղեկցվում է ազգայնական հակումներով: Այդ երևույթը նա բացատրում է անհատների զարգացման համար ազգութային ֆենոմենի ստեղծած «պատշաճ ու նպաստավոր» պայմաններով: Դրանք են Հայրենի երկրի («հողի»), ջրի, լեզվի, պատմական ավանդությունների և սովորույթների ընդհանրությունը, որոնցով ամեն մի ազգ բաժանվում է մյուսից: Սակայն Ադոնցը միաժամանակ այն հետևություններ է հանգում, որ յուրաքանչյուր ազգ զարգացման իր ուրույն ճանապարհն ունենալով հանդերձ, եթե ցանկանում է գոյատևել, պետք է քաղաքակրթության պատմության մեջ գրի իր էջը: Այսինքն, ամեն մի ազգություն պետք է կարողանա բացահայտել իրեն միայն հատուկ ընդունակությունները և «ազգային անհատականություն» մշակել: «Մի ազգի վսեմ ձգտումն ու գոյություն իրավունքը այլ, ավելի սուրբ սկզբունք է՝ ճանաչում»: Ազգային անհատականութ-

1 «Բանբեր գրականության և արվեստի», գիրք Ա, 1903, էջ 215:

յունն արտահայտվում է այլևայլ միջոցներով, շարունակում է հրապարակախոսը. «Մեղանում, մեր անհատականության և ինքնուրույնության պատկերը հանդիսանում է նշանակորեն *sensu simbolico*, մեր եկեղեցին: Բախտն այսպես է սահմանել»²:

Այնքանով, որքանով եկեղեցին իր նշանակությունը պահպանում է բոլոր քաղաքացիների համար հավասարապես, առանց հաշվի առնելու նրանց նյութական դրությունը և կրթական մակարդակը, եկեղեցուց խորթանալու ոչ մի հիմք չկա: Այս առումով, ահա, մեծ նշանակություն է ստանում նաև կրոնական խղճի հարցը, որը պայմանավորված է եկեղեցական արարողությունների և սովորությունների պահպանումով: Ահա թե ինչու դավանափոխությունը կրոնական խիղճ ունեցող մարդու համար հավասարազոր է համոզմունքը փոխելուն և դավաճանության:

«Ազգությունները հավետ հիշատակ են թողնում պատմության մեջ իրենց անհատականությամբ – այն հատկությունների միահամառություններ, որոնցով որոշվում են մյուսներից», – դրում է Ադոնցը: Ուստի, ում համար թանկ է ազգության այդ բանական հիմքը, նա կարող է ունենալ միայն մեկ ցանկություն, որ «16 դարի վերա կանգնած հաստատությունը անվթար մնա և նորա ազատությունը անսասան»³:

Երկրորդ հոգվածը, որ դարավերջի հայ հրապարակախոսական մտքի լավագույն արտահայտություններից կարելի է համարել, պատկանում է Զմյուռնիայի հոգևոր վիճակի առաջնորդ Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադյանի գրչին: Այն թեև դրված էր մեկեկես տասնամյակ առաջ, նամակի ձևով, բայց բանավիճային մարտական հոգվածի կշիռ ունեն և պատկանում էր այն վավերագրերի թվին, որոնց թարմությունը չի խամրում ժամանակի հարվածներից: Մուրադյանի նամակում՝ Ադոնցին, հարկավ, կաշառել էին նամակագրի նվիրվածությունը հայոց առաքելական եկեղեցու ավանդներին, նրա մտքի տրամաբանական ճկունությունը և բարձրաստիճան հայ հոգևորականի բարեկիրթ ոճն ու արժանապատիվ պահվածքը:

1888 թ. օգոստոսի 23-ի թվագրությամբ Մ. Մուրադյանը պատասխանում է Հոռմի քահանայապետ Լևոն ԺԳ-ի շրջաբերական դրությունը, որն ուղղված էր Կիլիկիայի հայոց Ստեփաննոս-Պետրոս Ժ պատրիարքին, նրա հովվության ներքո գտնվող հայազգի հոտին և հոգևորականներին: Այդ շրջաբերականով Հոռմի պապը խորհուրդ էր տալիս Կիլիկիայի հայոց պատրիարքին, անձամբ իր անունից ևս հորդորել հայերին, որպեսզի նրանք խելամուտ գտնվեն և նորից հաստատեն այն միությունը, որից հեռացել են նրանց նախնիները: Նա միաժամանակ պատրաստակամություն էր հայտնում գրկաբաց ընդունել վերադարձողներին, որոնք, նրա կարծիքով, կտրամադրվեն միություն, երբ իմանան, որ հեռացած են նրանից:

Հակիրճ մի նախաբանով ներկայացնելով հարցի էությունը, Մ. Մուրադյանը բացահայտում է շրջաբերականի բուն իմաստը, այն, որ Հոռմի պապը հայոց եկեղեցու զավակներին հրավիրում է «ի միություն ընդ Հոռվմայ... եկեղեցույն» և այս միությունը էլ «ի հնազանդութիւն Հոռվմայ քահանայապետին»:

2 Նույն տեղում, էջ 222:

3 Նույն տեղում, էջ 223:

Ինչո՞ւ եք հրավիրում նրանց, հարցնում է Մուրադյանը «Իբր ճշմարտությունը ճանաչելու և այն ընդունելու համար», այնինչ շրջաբերականի բուն նպատակն է հայերին ընդունել տալ Հոռմի քահանայապետների «գլխավորությունը» և հնազանդեցնել նրանց: Պարզաբանելով խնդիրը, Մուրադյանն անհրաժեշտ է համարում, որ հայերը լրջորեն կշռադատեն, թե ի՞նչը պետք է թողնեն և ինչը ընդունեն, ինչպես և այն, թե «արժա՞ն է արդյոք զայն թողուլ և զայս ընդունիլ»: Իր այս գրույթում, որը «քննություն» է անվանում, հեղինակն իր խնդիրն է համարում «պարզել ամեն բան» և ինքն էլ պատասխանում է իր առաջադրած հարցերին:

Այսպես ուրեմն, ընդառաջելով Հոռմի քահանայապետի հրավերին, հայերը պետք է թողնեն՝ իրենց եկեղեցու քրիստոնեական հիմնադրությունը և առաքելականությունը, հոգևոր անկախությունն ու ազատությունը, եկեղեցու ժողովրդական ոգին, ամենասուրբ դավանությունը, թե՛ «մի է հիմն և գլուխ եկեղեցվո—Հիսուս Քրիստոս: Պիտի ուրանան իրենց հայրապետաց և վարդապետաց հեղինակություններն, որոնք ա՛յդպես վարդապետած են և ա՛յդպես ուսուցած: պիտի ուրանան իրենց նահատակներն ու մարտիրոսներն», որոնք նահատակվել են եկեղեցու միակ գլխից՝ Հիսուս Քրիստոսից չբաժանվելու համար:

Ի վերջո «պիտի ուրանան 1854 տարվան մի եկեղեցի, որ յԱրևելս ամենագուն ժամանակներու մեջ, պահպանած է քրիստոնեութունն, պահպանած է հայ անունն ու լեզուն, հայ հիշատակն ու հիշատակարանն և ամեն հալածանաց ու արհավիրաց մեջ եղած է իրենց տեղի ապաստանին, իրենց մխիթարության հանգրվանն իրենց Հավատո, Հուսո և Սիրո նորանն՝ թե՛ երկնավոր և թե՛ երկրավոր կենաց համար»⁴:

Թողնելով ավելին, քան այս ամենը, ի՞նչ պետք է ընդունեն հայերը. «Հոռվմեական եկեղեցվո միությունն կամ նույն է Հոռվմեական քահանայապետին գլխավորությունն»:

Քննության առնելով այդ «գլխավորություն» արտահայտությունը, Մուրադյանը վճռականորեն հերքում է նման հիշատակության գոյությունը Ավետարանի մեջ: Նա ապացուցում է, որ Քրիստոսը Սիմոնին կամ Պետրոսին Վեմ անվանելով բնավ չի ծրագրել միապետական հովվության կամ առաքելապետության տիտղոս շնորհել նրանց: Թե՛ Պետրոսը, թե՛ բոլոր առաքյալները, լուսավորիչներն ու հովիվները, առաջնորդներն ու երեցները իրենց աստիճանին համապատասխան Վեմ են կոչվել եկեղեցու շինվածքի հոգևոր տնտեսության համար և ո՛չ երբեք Վեմ հաստատության, «որո վերա բարձրացած է եկեղեցվո շինուածն և ո՛չ երբեք գլուխ եկեղեցվո բովանդակ մարմնոյն, քանզի այդ միակ Վեմն և այդ միակ գլուխն է ինքն Տերն մեր Հիսուս Քրիստոս: Նա է հիմն, նա է Վեմն, որ կը պահէ և կը պահպանէ բոլոր շինուածն և եկեղեցվո անդամներն՝ են նյութ այս շինվածոյն»⁵:

Առավել պարզելու համար ասվածի միտքը, Մուրադյանը նշում է, թե քանի որ եկեղեցին աշխարհի բոլոր երկրների հավատացյալների հավաքումն է բոլոր ժամանակներում, սկսած Ադամից և մինչև «ի կատարած

4 Նույն տեղում, էջ 225–226:

5 Նույն տեղում, էջ 227:

աշխարհի», ուրեմն անհնար է, որ ժամանակներ անց ծնված մահկանացուն վեժ համարվի հաստատություն և կամ գլուխ մշտնջենավորին:

Միայն Քրիստոսն է և՛ թագավոր, և՛ տնօրեն, և՛ գլուխ: Քանի որ եկեղեցին մի հոգևոր զինվորություն է աշխարհի չարություն և խավարի դեմ, «ուրեմն Քրիստոսն է միմիայն Զորագլուխ այս հոգևոր պատերազմին և ոչ երբեք մարգ մահկանացու»⁶:

Դարեր շարունակ, եկեղեցու հոռմեական և հունական թևերի բաժանումից հետո, նման առաջարկներ բազմիցս արվել են հայերին հրապուրանքների, սպառնալիքների, նախատինքների ձևերով. «Ո՛հ, մի՞թե չէր հնար, պատվական եղբայր, որ դուք հրաժարվեիք ձեր գլխավորության հրավերեն ի սեր քրիստոնեական եկեղեցվո՞ երկնառաք հիմնադրին և գլխոյն, թողնեիք Հայաստանեայց Ս. եկեղեցին ազատ և անբռնաբարելի. թողնեիք, որ նա մնա իր նախնականության մեջ, իբրև անդին հնություն, իբրև տիպար նախնի գարուց քրիստոնեական եկեղեցվո՞»: Թողնեիք որպեսզի նա ժամանակ ունենա զբաղվելու իր ներքին կյանքով և իր զավակներին սնունդ մատակարարելով: Ահա այս է նրա պատասխանի նպատակը, պարզել այն ճշմարտությունը, թե «Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցին ո՞չ մոլորված է, ո՞չ ճշմարտություն հեռացած, և ո՞չ կարոտ հրավիրանաց ի դարձ ուղղության»⁷:

Ն. Աղոնցի և Մ. Մուրադյանի հրասարակախոսական հոգվածները, ասեք, շարունակություն էին դարեր ի վեր հայոց մեծերի մղած պայքարի, հանուն հայոց եկեղեցու դավանության անաղարտության և ինքնուրույնության պահպանման: Հրասարակախոսական այդ հուշարձաններն այսօր իսկ պահպանում են իրենց թարմությունը և հարցադրման հրատապությունը և ցանկալի կլիներ, եթե տպագրվեին մեր սերնդին ծանոթացնելու համար հայ աստվածաբանների բանավիճային արվեստի և տեսական հզոր պատրաստվածություն հետ:

* * *

Նպատակային ծրագրով է կազմված «Բանքերի» գեղարվեստական գրականության բաժինը: Այստեղ թեև գետեղվել են արևելահայ և արևմտահայ հատվածների արձակը և պոեզիան, բայց, այնուամենայնիվ, չի կարելի չնկատել խմբագրի առանձնահատուկ ուշադրությունը արևմտահայ գրականության հանդեպ: Մոտ անցյալի արհավիրքների թելադրանքով խմբագրությունը, ասեք, ի մի էր բերում հոգևոր այն արժեքների հանրադրումը, որը ստեղծվել էր արևմտահայ իրականության մեջ: Դա և՛ հարգանքի տուրք էր, տրված եղբայրակից արվեստագետների վաստակին, և՛ միաժամանակ այդ վաստակն արժանի ճանաչման հասցնելու ազնիվ նախաձեռնություն: Երիտասարդ խմբագրի նրբատեսությունն աներկբայորեն վկայում է նաև նրա քաղաքացիական արիության մասին:

Արևմտահայ գրականությունից «Բանքերի» էջերում տպագրվել են Վահան Թեքեյանի «Հնչակներ» շարքի 8 բանաստեղծությունները, Ատոմ Յարճանյանի (Սիամանթո) «Հոգևարքին ջահերը» շարքի 7 բանաստեղ-

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, էջ 23:

ծուծությունները⁸, Միքայել Կյուրճյանի «Վայրկյաններ ու վանկեր» շարքի 7 բանաստեղծությունները, Վահան Մալեգյանի և Վ. Տիրանյանի մեկական բանաստեղծություն: Արևմտահայ արձակագիրներից տպագրվել են Լևոն Շանթի «Եսի մարդը» պիեսը, Առանձարի «Տասը տարի ետքը», Երվանդ Օտյանի «Համբարձում աղան», Ռուբեն Զարգարյանի «Սև հավը կանչեց» պատմվածքները և Արփիար Արփիարյանի «Կարմիր ժամուց» պատմվածքն ու նրա «Արևմտյան հայոց արդի գրականությունը» գրականագիտական ուսումնասիրությունը:

Արևելահայ պոեզիան ներկայացնում են Հովհաննես Թումանյանը («Պանդուխտ եմ, քույրիկ»), Միմեն Բաբիյանցը («Մայիսյան դիշերին»), Լևոն Աթաբեկյանը (XXX), Ա. Ն. -ը («Հալածված ուրվականներ»), Ավետիք Իսահակյանը («Ինչ ես գազազում», «Մենակ մանկություն օրերն են անուշ»), Հովհաննես Հովհաննիսյանը («Լուսավորչի կանթեղը», «Դարեր անցուցինք»), Ն. Համբարձումյանը («Դարբին», «Կայծակն ինձ հետ»), Հարություն Թումանյանը («Աղջի՛, երեսկ ալ լինեմ») և Ոնոփրիոս Անուփյանը («Աշնանային խոհեր», «Հոգ չէ, ընկերներ»):

Արևելահայ արձակից «Բանբերի» երկու գրքերում լույս են տեսել միայն Վրթանես Փափաղյանի «Դատավոր» և «Արդար թե մեղավոր» պատմվածքները, Ավետիս Ահարոնյանի «Մահը» պատմվածքը: Թարգմանական մի քանի պատկերները, որ չնչին տեղ են գրավում հանդեսի էջերում, բավականաչափ համեստ են իրենց արժանիքների առումով:

Եվ այսպես, հայ գրականությունը «Բանբերի» էջերում հիմնականում ներկայացնում են արևմտահայ գրողները: Այդ շարքի գործերից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Լևոն Շանթի «Եսի մարդը» դրաման, դրված 1901 թ.: Հեղինակը, ասեք, շեղվելով հերոսական գործերի և աչքի ընկած գործիչների ջատագովության ավանդական սխեմայից, ստեղծել է մի շատ բարդ հանգույց, ինչպիսին կյանքն է հաճախ մատուցում անհատներին: Դավառում ազգասերի համբավ ձեռք բերած իսկյուտարցի Մուշեղ Տերյանը, ծառայություն մանելով Կ. Պոլսի ոստիկանապետի մոտ, սկսում է մատնել անցյալի իր գործընկերներին: Վերջիններս վճռում են սպանել դավաճանին և այդ գործի կազմակերպումը հանձնարարում են Տերյանի վաղեմի ընկերոջը՝ Սեգրակ Մինասյանին:

Բարդ անցումների, սիրային հուշերի և բացատրությունների հորձանքում Տերյանը պարզում է իր դեմ պատրաստվող հաշվեհարդարի ծրագիրը և ձերբակալել է տալիս Մինասյանին: Այնուհետև տեղի է ունենում նրա հանդիպումը Մինասյանի քրոջ՝ Ազնիվի հետ, որին սիրել էր տարիներ շարունակ: Աղջկա խնդրանքն ազատել տալու եղբորը, ապարդյուն է անցնում, մինչդեռ այդ զրույցի ընթացքում բացահայտվում է Մուշեղի հոգևոր անկման լիակատար պատկերը: Նա հրաժարված էր բարոյական այն ամեն արժեքներից, որոնք անսահման թանկ էին իր երբեմնի ընկերների և սիրած աղջկա համար: «Ապերախտներ, շողոքորթներ, — Ազնիվի հորդորներին ի պատասխան գոչում է նա, — ինձի պետք չէ ձեր սերը: Ո՛չ ձեր սերը, ո՛չ ձեր համակրանքը: Ինձի պետք չէ ոչ ոքի սերը... Գնա՛, գնա ըստ՛

⁸ Հետագայում վերանվանված «Հոգևորքի և հույսի ջահեր»:

այդ քու եղբորը ու այդ քու եղբորը եղբայրներուն, որ ես գիտեմ ինչպես պետք է ճգմել պատերուն տակեն սողացող օձերուն գլուխը...»:

«Բանբերի» առաջին գրքի արձակի բաժնում Ազոնցն առաջինը գետեղևի է Արփիար Արփիարյանի «Կարմիր ժամուց» պատմվածքը: Հայտնի է, որ 1890 թ. Գում-Գափուլի ցուլցից հետո ծայր են առնում ձերբակալութունները, մտավորականության հետապնդումը, խստանում են նախնական գրաքննության կանոնները... Այս ամենի ֆոնի վրա «Կարմիր ժամուց» պատմվածքը երևում է իբրև հայության առաջավոր խավերին կյանքի կոչելու, գործելու և պայքարելու ազգանշան: Քանի որ 1900-ական թվականներին նույնպես իրագրությունը թուրքիայում մնում էր աղետալի, Ազոնցի ուշադրությունն այդ պատմվածքի նկատմամբ պետք է գիտել իբրև ժամանակի հրամայական պահանջին պատասխանելու հրապարակախոսական ելույթ:

Սուլթանական կառավարության կարգ ու կանոնին հավատարիմ մեծահարուստ Քյուլքճյան Հայրապետ էֆենտիի հոգևոր սթափումը և ազգի ազատության գործի նվիրյալ գյուղական քահանա Հուսիկի հետևողական գործունեությունը և հավատարմությունն ընտրած նպատակին բնութագրում են Արփիարյանի քաղաքական գործունեության նպատակաուղղվածությունը և «Բանբերի» խմբագրի քաղաքական կեցվածքը գարասկզբին:

Հանդեսի նույն համարում գետեղելով Ռուբեն Զարգարյանի «Սև հավր կանչեց» պատմվածքը, Ազոնցը դարձյալ վեր է հանում արևմտահայ ժողովրդի գյուղական հատվածի տնտեսական ողբերգական կացությունը: Խորհրդանշական «Սև հավր», ասեք, կանչում է ոչ միայն Կ. Պոլսում մշակության մեջ կյանք մաշող դժբախտ երիտասարդների ընտանիքների, այլև Հայաստանի ողջ հայության ապագայի համար:

Առանձարի «Տասր տարի ետքը» պատմվածքը նվիրված է հրապարակախոս Լևոն Սարգսյանին: Պատմվածքում քննարկվում է Հայ խմբագրի և գրողի, Հայ մտավորականների ճակատագրի խնդիրը: Առանց նյութական հատուցման, առանց կայուն աշխատավարձի, ստեղծագործելու անհնարինությունը կործանում էր տաղանդավոր գործիչներին:

Երվանդ Օտյանի «Համբարձում աղան» նովելն արևմտահայ երգիծական գրականության լավագույն օրինակներից էր, որը մեծ թարմություն է մտցնում հանդեսի գրական բաժինը:

Վրթանես Փափագյանի «Դատավոր» պատմվածքը մարդկային առաքինությունների, բարոյական նկարագրի և ազնվության կորստի մասին է: Իրադարձությունները տեղի են ունենում ուսանողական միջավայրում: Թոմասյանի կինը, Վիրգինեն բաժանվում է ամուսնուց. նա սիրում էր Հեքիմյանին: Վերջիններիս դատում և դատապարտում են ուսանողական գատարանում: Դատան էր դատավորի գերում հանդես եկող Ղազարյանը: Հեքիմյանը թողնում է ուսումը և վերադառնում հայրենիք: Հետագայում նա ամուսնանում է սիրած կնոջ՝ Վիրգինեի հետ: Նրանք մի գավակ են ունենում, բայց կինը վախճանվում է: Կարճ ժամանակից հիվանդանում է և տղան. հրավիրված բժիշկը երբեմնի «դատավոր» Ղազարյանն էր... Երեխան մահանում է: Ղազարյանը վերապրում է անցած տարիների մղձավանջը... Կէ՛ որ ինքը նույնպես սիրահարված էր Վիրգինեին և ձգտում էր

տիրել նրան: Կինը մերժում է նրա «սերը», և Ղաղարյանը վրեժ է լուծում երկուսից, ստորացնելով նրանց ուսանողական դատարանում: Վ. Փափազյանի երկրորդ պատմվածքի հերոսը Ժնևի համալսարանի ուսանող է: Հայրենիք վերադառնալու համար նրան 300 Ֆրանկ էր հարկավոր, բայց այդ դումարն ուշանում է: Սպասումների օրերին նա բանկում զարմանքով տեսնում է մի ֆրանսիացի քաղաքացու, որը դրամներ էր փոխանակում և ստանում է 2000 Ֆրանկ: Արդյոք չկողոպտի՞ այդ անբանին, որը նման էր խողավաճառի: Այդ օրը նա երազում տեսնում է, թե ինչպես են իրեն դատում ֆրանսիական դատաբանում՝ «խողավաճառին» կողոպտելու համար: «Արդար թե մեղավոր» պատմվածքի հերոսը երազում ինքնապաշտպանական մի հետաքրքրական ճառ է արտասանում:

«Մահը» պատմվածքի հեղինակ Ավետիս Ահարոնյանը նկարագրում է տաղանդավոր մի երիտասարդի մահը՝ համաճարակի օրերին: Սրտաճմլիկ պատկերներով Ահարոնյանը նկարագրում է հիվանդի ծեր ու միայնակ ծնողների ծանր տագնապներն ու անփարատելի վիշտը:

Ինչպե՞ս էր կարողացել Ադոնցը ընտրել արևմտահայ գրականության ռամի հեղինակներին:

Ադոնցը Պետերբուրգից հատուկ նամակով անձամբ խնդրել է Արփիար Արփիարյանին՝ օգնել իր հանդեսի հրատարակությունը թե՛ անձնապես և թե՛ արևմտահայ այլ գրողների մասնակցությամբ⁹: Արփիարյանը, որն այդ օրերին ապրում և լրագրական գործունեությունում էր զբաղված Փարիզում, մեծ սիրով ընդառաջում է Ադոնցի խնդրանքին: Նա ուղարկում է իր մերձավորադույն բարեկամ Երվանդ Օտյանի «Համբարձում աղան» սքանչելի պատմվածքը, իր «Կարմիր ժամուց» պատմվածքը և «Արևմտյան հայոց արդի գրականությունը» մեծարժեք ուսումնասիրությունը: Պետք է ենթադրել, որ դարձյալ Արփիարյանի շնորհիվ են Ադոնցին ուղարկվել արևմտահայ մի շարք գրողների ստեղծագործությունները, այդ թվում նաև Ափամանթոյի բանաստեղծությունները: Կարծում ենք Արփիար Արփիարյանի համբավն այնքան էր տարածված, որ «Բանբերի» խմբագիրը ձեռք է մեկնում նրան իբրև հուսալի օգնականի: Եվ իսկապես, դարավերջի արևմտահայ դրական գործիչների մեջ չկար մեկ այլ անուն, որն ինչպես գրող, լրագրող և հրապարակախոս այնքան վաստակ և բարի համարում ունենար, որքան Արփիարյանը: Այսպես, 1884-ին նա խմբագրել է «Արևելք» թերթը, իսկ 1885-ից՝ «Մասիս» հանգեսը: 1891–1895-ին խմբագրել է «Հայրենիք» թերթը, 1898-ին Լոնդոնում, Բաշալյանի հետ համատեղ՝ «Նոր կյանք» պարբերաթերթը: Այնուհետև մինչև իր եղերական մահը (1908 թ.) նա թղթակցել է «Մշակին», ապա Կահիրեում խմբագրել «Հայ հանգես», «Լուսաբեր» և «Շիրակ» պարբերականները, որոնց էջերում լույս են տեսել նրա գրական գործերը և հարյուրավոր հոդվածներն ու թղթակցությունները:

Արփիարյանը միաժամանակ զգալի աշխատանք է կատարել ժամանակի երիտասարդ գրողների հետ, որոնք աշխատակցում էին նրա հրատարակություններին (Գրիգոր Զոհրապ, Լևոն Բաշալյան, Տիգրան Կամսարական, Երվանդ Օտյան, Թլկատինցի և ուրիշներ): Գրականագետ Գառնիկ

⁹ Տե՛ս Գ. Խ. Ս տ ե փ ա ն յ ա ն. Արփիար Արփիարյան. Երևան, 1955, էջ 233:

Ստեփանյանը նշում է, որ նա այդ գրողների օգնությունը նպաստում է ունախտական արձակ գրականության զարգացմանը, «սկիզբ դնելով գրական մի ամբողջ շարժման, որն անխղճությամբ կապվում է նրա անվան հետ»¹⁰: Նա հետևողականորեն ուղղություն է ընթացք էր տալիս սկսնակ լրագրողների աշխատանքներին: Այսպես, հայտնի է, որ լրագրող Մելքոն Կյուրճյանն Արփիարյանի կազմած ծրագրով է ուսումնասիրում Կ. Պոլսի հայ պանդուխտների կյանքն ու առօրյան և ամբողջ մեկ տարի «Մասիս» էջերում «Հրանգ» ծածկանունով հրատարակում «Պանդուխտի կյանքեն» ժամանակին հոչակված ակնարկները¹¹:

Նիկողայոս Ադոնցը «Բանբերի» առաջին գրքի արձակի բաժնում ղետեղում է Արփիարյանի «Կարմիր ժամուց» պատմվածքը, իսկ առաջին և երկրորդ գրքերում, շարունակաբար՝ «Արևմտյան հայոց արդի դրականությունը» ուսումնասիրությունը: Բացառիկ կարևորություն ունեցող այդ աշխատությունը ներկայացնում է արևմտահայ գրականության վերընթաց շարժումը 1879–1895 թթ. և 1896-ից հետո ընկած պատմական ժամանակահատվածում: Ինչո՞վ էր պայմանավորված այդ բաժանումը: Հեղինակը ելակետ է ընդունում այն իրողությունը, որ ուղևորական պատերազմը մեծապես փոխում է հայության «համընթաց կյանքը»: Եթե մինչ այդ արևմտահայերի իդեալական ապագան պատկերվում էր մշուշապատ հեռուներում, պատերազմը փոխում է իրերի ընթացքը, հայերի մտավոր կյանքը մտնում է մի նոր շրջան, որի երկու փուլերի համար ևս հեղինակը բնութագրական է համարում այն, որ «գրականությունը ցեղին վերածնունդի երկունքին սատարեց, մտքերի և սրտերու վրա դերագրեցիկ իշխողությունը»:

Գրականությունը, սակայն, 1880-ին մտցված նախնական դրաքննություն հարուցած դժվարությունների պատճառով հիմնականում ճանապարհ է հարթում մամուլի միջոցով: Արփիարյանը հանգամանորեն ներկայացնում է արևմտահայ մամուլի դերը դրականության և արևմտահայ մշակութի բազմազան ճյուղերի զարգացման և ազգայնության ոգին սլահպանելու գործում՝ «Թուրքիո հայահայած քաղաքականության դեմ իր խուլ մարտնչումովը»:

1888 թ. Թուրքիայում նախնական գրաքննություն է սահմանվում նաև պարբերական մամուլի համար. խմբագիրներն ու թերթերը հետապնդվում են, որոշ թերթեր ժամանակ առ ժամանակ կամ ընդմիջտ փակվում, քանզի «Հայաստանի թշվառ վիճակին հոգածու կերևնային և ազգային իրավունքները կպաշտպանեին: Հայ օրագրությունը բազմաչարչար մարտիրոսություն մը պատմությունը ունի, արյունոտ էջերով լեփ լեցուն»¹²:

Մասնավորապես 1880-ական թվականների դրականության զարգացման հարցում Արփիարյանը մեծ կարևորություն է հատկացնում «Արևելք» թերթի գործունեությանը, որը 1884–1891 թվականներին տպագրվում էր Կարապետ Յուլիանյանի «Մասիս» լրագրի հետ համատեղ: Արևմտահայ դրականության պատմության ամենացայտուն էջերը

10 Նույն տեղում, էջ 99:

11 Նույն տեղում, էջ 100:

12 «Բանբեր գրականության և արվեստի», գիրք Ա, էջ 190:

1884–1891 թթ. պահված են այդ թերթերում, գրում է Արփիարյանը: Անգամ ամենատարբեր ժանրի գործերը որքան էլ անջատ միմյանցից, «բայց և այնպես ընկերական, գրական լեզվական համանման գաղափարներով զանգված ամբողջություն մը կը պատկերացնեն»¹³:

1876 թ., երբ Կ. Պոլսում կազմակերպվում է Արարատյան ընկերությունը, Ռուսաստանի և Թուրքիայի հայ մտավորականների ուղադրությունը կենտրոնանում է Արևմտյան Հայաստանի վրա: Ռուս-թուրքական պատերազմն ուժեղացնում է երկու թևի հայ գործիչների կապերը: Եթե մինչ պատերազմն այդ կապը չկար, «հիմակ գաղափարական կուսակցություն մը կապովը միացած են»:

Արփիարյանն այս ուսումնասիրության մեջ հանգամանորեն, նյութի լավատեղյակությամբ ներկայացնում է և՛ հին սերնդի, և՛ իր օրերի արևմտահայ գրողներին ու հրատարակատեսուներին: Նա միաժամանակ բնութագրում է արևմտահայ գրականության մեջ ստեղծված երկու ակնառու ուղղությունները, որոնցից առաջնությունը տալիս է բուն Հայաստանի գրականությանը, որի լեզուն թեև անմշակ, բայց ավելի հզոր էր իր ազգային ոգով: Այնինչ, նրա կարծիքով Կ. Պոլսի և Զմյուռնիայի գրողներն ապրած չլինելով հայրենի հողի վրա, ինչպես հարկն է, չէին ճանաչում Հայաստանի ժողովրդին: Այդուհանդերձ Արփիարյանը վեր է հանում նաև այդ քաղաքների մշակութային կյանքի և հայ գրականության մի շարք առավելությունները: Արփիարյանն անդրադառնում է նաև դարավերջի արևմտահայ գրականության, պոեզիայի, թատերգության, պատմական գիտության վիճակին: Նա միաժամանակ ընդգծում է այն երևույթը, որ սկսած 1884 թ. «Արևելքը» և «Մասիսը» ծրագրված կերպով ներկայացրել են ռուսահայոց մտավոր կյանքի պատկերը և տպագրել արևելահայ գրականության հիշարժան էջերը: Այդ թերթերը միաժամանակ նկատելի տեղ են նվիրել ռուս իրականությանը նվիրված հոդվածներին և թարգմանություններ տպագրել ռուս գրականությունից:

1890 թ. էրզրումի ջարդը և Գում-Գափուլի դեպքերը փոխում են երկրի քաղաքական իրավիճակը: Գրական գործիչները հետապնդվում են, թերթերը՝ փակվում: «Գում-Գափուլի ցույցը, — դրում է Արփիարյանը, — անցյալի մը վերջակետն էր ու ապագայի մը մեկնակետը: Այդ օրը հայը նմանեցավ թշնամի բանակ է մը պաշարյալ ժողովրդի մը»¹⁴:

Արփիարյանի հոդվածն ավարտվում է պատմական նոր փուլի, վերահաս ռեակցիայի սկզբնավորման հիշատակությամբ: Սույն հոդվածն իր լավատեղյակությամբ և ժամանակի գրական գործիչների վաստակի մեկնաբանության ճշմարտացիությամբ ու խորություններով գրեթե զուգակշիռը չունի: Ահա թե ինչու Գ. Ստեփանյանն ամենայն իրավամբ հայտարարում է, որ «Պետերբուրգում հրատարակվող «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի Ա և Բ գրքերում լույս տեսած «Արևմտյան Հայոց արդի գրականությունը» մինչև մեր օրերում էլ միակ հուսալի աղբյուրն է արևմտահայ գրականությունն ուսումնասիրողների համար»¹⁵:

13 Նույն տեղում, գիրք Բ, 1904, էջ 155:

14 Նույն տեղում, էջ 188:

15 Գ. Ն. Ս տ Ե փ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 120:

Արևմտահայ պոեզիային նվիրված բաժնում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Սիամանթոյի «Հոգեվարքին ջահերը» բանաստեղծությունների շարքը, որն առանձին գրքով հրատարակվել է միայն 1907 թ.: Այդ շարքի բանաստեղծությունների տպագրությունն առանձնահատուկ արժեք է հաղորդում Ազոնցի հանգեսին: Բանաստեղծությունները գրված էին արևմտահայ ժողովրդի մոտ անցյալում ապրած ողբերգության թարմ տպավորությունների ներքո: Սիամանթոյի բանաստեղծությունները յնցում են ազգային վիշտը խորապես վերապրած բանաստեղծի հոգեկան տագնապների ուժգնությամբ: «Թաղում», «Արյուն», «Չարչարանքի երազ», «Հոգիս» բանաստեղծությունները ոչ միայն արտացոլում են սրահար ու բնավեր ժողովրդի կրած անլուր տառապանքները, այլև գերբնական կանխատեսությամբ մատնանշում մռայլ դալիքի հեռանկարը: Այդ բանաստեղծությունների գերագույն գործոնը բանաստեղծի հոգին է. զգայուն, աղետներից արյունաներկ, ազգային վշտերից հուզախուռով բանաստեղծի հոգին: Ահա «Արյուն» բանաստեղծության լեյտմոտիվը. ավերումների համայնասլատկերի հանդիման թափվում են հույսի շուշանները, գարունների խենթացնող գեղեցկության տեղ տրտմության երկաթե ձյուն է տեղում բոլորի անմխիթար որբության վրա: Անցյալներում եղել են երազներ ու արշալույսներ, բայց ավաղ, պարզվում է, որ բոլոր արշալույսները «Տարիներե՛ ի վեր, մեր արյունեն են կարմիր...»:

«Հոգիս» բանաստեղծությունը, որն ակադեմիկոս Հրանտ Թամրազյանն անվանում է Հայ պոեզիայի անթառամ էջերից մեկը, հիրավի տեսանելի է դարձնում բյուրավոր անգամներ «ամենուն ցավը» վերապրած բանաստեղծի աստվածային հոգին: Բանաստեղծի հոգին լալիս է իր շղթայակապ քույրերի աքսորի ճանապարհին, նա այն մանուկների հետ է, որոնք աղետխարժ ճիչերով անարգար սրբերից հալածական փախչում են փլատակների միջից: Հոգին անձրև է՝ որ տեղում է մորթազերծ գիակների վրա:

Սիամանթոյի կյանքի և գրական գործունեության տաղանդավոր ուսումնասիրող Հրանտ Թամրազյանը գրում է. «Բանաստեղծի հոգեկան աշխարհի ամեն մի ծալք, ամեն անկյուն բռնված է ժողովրդական ողբերգությամբ: ... Նրա երգը ազատության ներբող է և միաժամանակ՝ գալիք սարսափների գուշակություն, որ նպատակ ունի ոչ թե հուսալքելու, այլ զգաստացնելու, ոտքի կանգնեցնելու, արիություն ներարկելու սերունդներին գալիք աղետները կանխելու նպատակով»¹⁶:

«Բանբերի» գրական բաժինը զարգարում են նաև Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Միքայել Կյուրճյանի, Վահան Թեքեյանի բանաստեղծությունները, որոնք հավաստում էին Հայ նոր պոեզիայի աննախընթաց վերելքը գարասկզբին:

Փամանակի գրականագիտական մտքի նվաճումներից էր Նիկոլ Աղբալյանի «Երգ ու վերքից հետո» հոգվածը՝ նվիրված Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների գրքի 1903 թ. նոր հրատարակությանը: Հոգվածագիրը, մեկ առ մեկ ներկայացնելով գրքում գետեղված նոր բանաստեղծությունները, ուրախությամբ արձանագրում է, որ Իսահակյանը հասունացել, դուրս է եկել իր երգ ու վերքերի վշտերից դեպի մի նոր ու լուսա-

16 Հրանտ Թամրազյան. Սիամանթո. Երևան, 1969, էջ 59:

շող կյանք: Նա արդեն իրականությունը նայում է խոհուն հայացքով և ի մխիթարություն բոլոր տառապող հոգիների բարձրաբարբառ հայտարարում, որ մարդու գոյությունն անիմաստ չէ, և որ նա կարող է իր հոգով հնչեցնել տիեզերքի զանգը և պատմել աստղերին մարդու մեծություն ու փառքի մասին:

Ադոնցը մեծ ուշադրություն է նվիրել նաև հայ դրողների դրական ժառանգության ձեռքբերման և դրանց հրատարակման հարցին: Այսպես, Կարապետ եզյանից ստանալով Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի 1857–1876 թթ. 29 նամակները, «Բանբերի» Ա գրքում տպագրել է կյանքի վերջին շրջանում, 1868-ից հետո Նազարյանի դրած նամակները, որոնք, ըստ Ագոնցի, «նոր լույս են սփռում Ս. Նազարյանի վերջին տարիների կյանքի և գործունեության վրա»:

Ագոնցը հայ գրականության պատմությունը հարստացրել է ևս մեկ ձեռագիր հուշարձանի տպագրությամբ: Բ գրքում նա հրատարակել է Գաբրիել Պատկանյանի «Կայպակ» ստեղծագործությունը, որը ժամանակին վերագրվել է Միքայել Նալբանդյանին:

* * *

«Բանբեր դրականության և արվեստի» հանդեսը բացվում է Նիկողայոս Ադոնցի հակիրճ գրույցով՝ նվիրված արվեստի դերին և նշանակությանը: Նկարը նա համարում է ոգեշունչ ստեղծագործություն, որը համազոր գործոն է կենդանի խոսքի և «մշտաբարբառ գրի» դրականության: Թեև այն առաջին հայացքից դյուրըմբռնելի չէ, ինչպես բանավոր խոսքը և գրականությունը, «բայց ունի առանձնակի շնորհ մի քանի գծերով և գույներով ասելու այն, ինչ որ կը թերանար կատարել գուցե սովոր հատորը»¹⁷: Ադոնցն արվեստը կահավորություն չի համարում բնակարանում, այլ բաց լուսամուտ, որտեղից գեղում է կենարար թարմություն: Նա վկայակոչում է Ջ. Ռեսկիի ասույթն այն մասին, թե «սենյակն առանց նկարի նույնն է, ինչ որ տունն առանց լուսամուտի»: Ապրել և շնչել հարկավոր է հարկավ, շարունակում է նա, երջանկության անունով, լույսի համար, լույս, որ ընդհանուր հատկությանց կից մասնավորության երանդ էլ ունենա և պահե: «Գրականությունն ու արվեստ լույսի նուրբ ցնցուղներն են, որ փակ դռների վերայից երկա՛ր շողերով լուսավորում են հեռու մթություն ուղին և խոստանում...»¹⁸:

Իր հանդեսի երկու գրքերում Ադոնցը գետեղել է արվեստի աշխարհի մի շարք հայտնի նկարիչների և քանդակադործների աշխատանքների վերատպությունները: Դրանցից են՝ է. Կարրիերը, Գ. Ռոսետտին, Օ. Ռոդենը, Ֆ. Շտուկը, Լ. Բաքստը, Ա. Ադաչը, Պ. Ռիթը, Լ. Բալեստրիերին և այլք: Հայ նկարիչներից ներկայացվել են է. Շահինի, է. Մահտեսյանի, Փ. Թերլեմեզյանի, Ա. Շապանյանի, Վ. Սուրենյանցի, Ե. Թադևոսյանի, Հ. Կաղեսյանի, Մ. Ալաջալյանի, Ա. Բաբայանի նկարների վերատպությունները:

Հետաքրքրական է պարբերաթերթում գետեղված մի ծանոթություն այն մասին, թե ինչու արվեստի գործերի վերատպության բաժնում օտարազգի

17 «Բանբեր գրականության և արվեստի», գիրք Ա, էջ VII:

18 Նույն տեղում, էջ VIII:

նկարիչներին անհամեմատ մեծ տեղ է հատկացված: «Գեղարվեստական մասի գլխավոր նպատակն է տալ հայ հասարակության մեր հայտնի արվեստավորների աշխատությունները, միևնույն ժամանակ ծանոթացնել եվրոպական գեղարվեստի ականավոր ներկայացուցիչների լավագույն երկերի հետ: Մեր ազգի պատվական նկարիչները այնքան թերահավատ են գեպի հայ մամուլը և հայ հասարակության գեղարվեստական պատրաստականությունը, որ գանդաղությունք են արձագանք տալիս մեր կոչին: Ակամայից ավելի մեծ տեղ ենք տալիս օտար աշխատությանց, հուսով որ ժամանակով կհասնենք մեր իսկական տենչին»¹⁹: Այդ «տենչին», ցավոք, խմբագրությունը չի հասնում հանդեսի հրատարակության դադարեցման կապակցությունք:

Խմբագրությունը նպաստում է նաև ընթերցողների տեսական գիտելիքների խորացմանը: Այսպես, «Պատկերներ և քանդակներ» հոգվածի հեղինակը ծանոթություն է տալիս արվեստի ուղղությունների մասին (ռեալիզմ, իմպրեսիոնիզմ, սիմվոլիզմ, նախառաֆայելյան ոճ և այլն): Ինտելեկտուալում են նաև հրապարակվող նկարներից երեքը՝ «Բեթհովեն», «Զարգական սյաննո» և «Օրենք»:

Արվեստի բաժնի ամենաուշագրավ հոգվածը թերևս Գաբրիել Մուրեյի «Մի հայ փորագրիչ» (Էդ. Շահին) հոգվածն է, արտատպված «The studio» հանդեսի 1901 թ. գեկտեմբերի համարից (թարգմանությունը՝ Ս. Գաբրիելյանցի): Հոգվածագիրը Շահինի արվեստի համար բնորոշ է համարում թախիծը, որը սփռված է նրա բոլոր գործերում: Այդ թախիծը նա բնորոշ է համարում նաև հայկական կոտորածները տեսած կամ լսելով զգացած և վերապրած անձանց համար: Հոգվածագիրը զարմանքով է ընդգծում փարիզյան կյանքի նրբությունների նրա օտարականի ընկալումը, որը կատարելության է հասնում: «Նույն մեղամաղձն է, — դրում է նա, — որ առաջնորդել է նրա որոնումներին և նա ընտրել է իրեն համար ուսումնասիրության նյութ աշխարհը թշվառների և բանվորների, շրջիկների և մուրացկանների, Մոնմարտրի սիրու վաճառուհիների և գիշերային պանդոկների, որոնց և նա պարտական է իր խորին և վշտալլուկ ողևորության բուպենբերը»: Մուրեյն այնուհետև հիշատակում է նրա բազմաթիվ աշխատանքները, որոնք բնութագրում է իբրև «կյանքից վերցրած կենդանի պատկերներ, իրենց ցավագին ու բնորոշ ճշմարտությունք»: Քննության առնելով Շահինի առանձին աշխատանքների առանձնահատկությունները, հոգվածագիրը հետևյալ ղնահատականն է տալիս նրա արվեստին: «Զգացմունքների նրբությունք, իր սուր գիտողությունք, տեխնիկայի կատարելությունք Շահինը արժանի է հարգանքի թե՛ արվեստավորների և թե՛ քննադատների կողմից: Նա մի բարեխիղճ աշխատավոր է, ճշմարտության անդուլ որոնող»²⁰:

Ազոնցի հրատարակության դադարեցումը հավանաբար կապված էր մի քանի հանդամանքների հետ, որոնք պարզել մեզ չհաջողվեց: «Բանբերի» Բ գիրքը, որ նախատեսված է եղել լույս ընծայել 1903 թ. նոյեմբերին, հաջորդ տարվա մարտին դեռևս չէր հրատարակվել: Անհանգստացած այդ

19 «Բանբեր գրականության և արվեստի», գիրք Բ, էջ 218:

20 Նույն տեղում, էջ 203:

Հապաղումով, խմբագրին մի նամակով դիմում է Հանդեսի բարեկամներից մեկը՝ Գր. Արիստակեսյանը: Նա ցանկալի է համարում, որ երկարատև լինի «այդ համակրելի ձեռնարկությունը», որն ինքը շատ է հավանում «մանավանդ, որ նրա նպատակն է ծանոթացնել մեզ նաև տաճկահայ գրականության հետ»: Նամակագիրը պատրաստակամություն է հայտնում Հանձն առնել «Բանբերի» հրատարակությունը, որպեսզի այն լույս տեսնի կանոնավոր և ժամանակին, հույս ունենալով, որ իրեն կօգնի և Հայ հասարակությունը:

«Բանբերի» Բ գրքի առաջին իսկ էջում տպագրելով այս նամակը, Ադոնցը հրապարակավ շնորհակալություն է հայտնում Արիստակեսյանին՝ նրա «բարեսեր առաջարկի համար»: «Այսպիսի մի ինքնաբեր պատրաստականություն օգնելու Հայ գրականության, — գրում է նա, — խիստ հազվադեպ է և անսպասելի, մանավանդ մեր օրերում, երբ հռչակված «ազգասերները» ազգասիրությունը լավ բան են համարում միմիայն ուրիշների համար, բայց ո՛չ իրենց. և ամեն կերպ աշխատում են իրենց մերձավորների հետև պահել այդ «անօգուտ» ասպարեզից»: Այդ նույն մուտքի խոսքում Ադոնցը «Բանբերի» հրատարակության գործն Արիստակեսյանի շնորհիվ միանգամայն ապահովված համարելով, նշում է նաև, որ Հանդեսը ժամանակին և կանոնավոր հրատարակելու համար «պակասում են դեռևս մի քանի պայմաններ», որոնք, հույս է հայտնում, որ «շուտով կլրացվին»: «Բանբերի» խմբագիրն ընթերցողներին տեղյակ է պահում նաև, որ առաջիկայում զեղարվեստական բաժինը պետք է խմբագրի «մեր Հայտնի նկարիչ պ. Վարդգես Սուրենյանցը», որին նույնպես շնորհակալություն է հայտնում, իր խնդրանքը հարգելու համար:

«Բանբեր գրականության և արվեստի» հանդեսին, սակայն, վիճակված էր շարունակվել:

ЖУРНАЛ "ВЕСТНИК ЛИТЕРАТУРЫ И ИСКУССТВА"

МАРГО МХИТАРЯН

Резюме

Журнал "Вестник литературы и искусства" издавался в Петербурге в 1903—1904 гг. крупным историком Н. Адонцем. Главная цель редактора сводилась к воспитанию армянского читателя путем самообразования и духовного развития. Для достижения этой цели Н. Адонц опубликовал в вышедших двух томах издания не только статьи публицистического характера, но и художественные произведения, принадлежавшие перу выдающихся представителей армянской поэзии и прозы, в частности, таких, как О. Туманян, А. Исаакян, Сиаманто, Е. Отян и др. Помимо того, он поместил в журнале репродукции произведений известных зарубежных и армянских художников и скульпторов (О. Роден, Ф. Штук, Л. Бакст, П. Терлемезян и др.).